ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ
ՂԵԿԱՎԱՐ

РУКОВОДИТЕЛЬ
АДМИНИСТРАТИВНОГО
АППАРАТА ГЛАВНОГО
ШТАБА ВООРУЖЕННЫХ
СИЛ РА

«25» 12 2014թ.
1158/ա

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿԻ ԻՐԱՎԱԲԱՆ
Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

ՀՀ պաշտպանության նախարարության ծառայողական ավտոմեքենաների քանակի, ցանկի, մակնիշի և զինհամարանիշների մասին Ձեզ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված 17.12.2014թ. թիվ 234-9 գրության առնչությամբ հայտնում եմ, որ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2011 թվականի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու և գործողության դնելու մասին» համապատասխան հրամանի պահանջների, Ձեր կողմից պահանջվող վերը նշված տեղեկությունները համարվում են **«Հույժ գաղտնի»** տեղեկություններ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի, ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 19-ի N 350 որոշմամբ սահմանված կարգով՝ տեղեկությունները (գաղտնիության տեսակը որոշելու) պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու իրավասությունը վերապահվում է տվյալ պետական մարմնի պաշտոնատար անձանց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի (Տեղեկատվության ազատության սահմանափակումները) 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջներով, հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության ծառայողական ավտոմեքենաների քանակի, ցանկի, մակնիշի և զինհամարանիշի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու Ձեր խնդրանքը բավարարել չենք կարող:

Հարգանքով՝

Գեներալ-մայոր Ա. ԲՐՈՒՏՅԱՆ